

Կազմված է 15.06.2017թ.
Բաղկացած է 25 էջից

Տպագրված է ընդամենը 5 օրինակ

ՕՐԻՆԱԿ _____

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

ԳՐԱՆՑՎԱԾ Է՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՐԴԻ 15.06.2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ԿՈՂՄԻՑ 09.02.2012թ.

ԹԻՎ 13/11-Լ ՈՐՈՇՄԱՄԲ

գրանցման թիվ՝ 222.160.68143

վկայականա՝ 03 Ա 218143

հարկ վճարողի հաշվառման համար՝
02605266

10.03.2014թ. գրանցված կանոնադրության
թիվ _____ փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից
«_____»._____.2017թ.

ՀՀ փաստաբանների պալատի
նախագահ՝ Արա Զոհրաբյան

ՀՀ պետական ռեգիստրի ղեկավար՝
Գարուշ Դավթյան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»
Հ Ի Մ Ն Ա Դ Ր Ա Մ Ի

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հայաստանի Հանրապետություն,
քաղաք Երևան
2017թ.

Ի.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1 «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամը (**այսուհետև՝ Հիմնադրամ կամ ՀՀ փաստաբանական դպրոց կամ Փաստաբանական դպրոց**) կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող (ոչ առևտրային) կազմակերպություն է, որը հետապնդում է գիտական, կրթական և այլ հանրօգուտ նպատակներ:
- 1.2 ՀՀ փաստաբանական դպրոցը գործում է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության օրենսդրության, սույն կանոնադրության և ՀՀ փաստաբանական դպրոցի գործունեությունը կարգավորող այլ իրավական ակտերի հիման վրա:
- 1.3 ՀՀ փաստաբանական դպրոցի իրավական կարգավիճակի, հիմնադրման, կառավարման մարմինների, կանոնադրության, լուծարման, գույքի օգտագործման, ինչպես նաև այլ հարցեր կարգավորվում են «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (**այսուհետև՝ Օրենք**) սահմանված առանձնահատկությունները:
- 1.4 Այն բոլոր հարցերը, որոնք սույն կանոնադրությամբ չեն կարգավորվել, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:
- 1.5 ՀՀ փաստաբանական դպրոցը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետև՝ ՀՀ փաստաբանների պալատ կամ Հիմնադիր**) կողմից (պետական գրանցման տվյալները՝ վկայական 03 Ա 070122, գրանցման համարը՝ 211.174.03619, 27.10.2005թ., տրված՝ իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից, գտնվելու վայրի հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Զաքիյան փողոց, թիվ 3-րդ շենք, փոստային դասիչ՝ 0010):
- 1.6 ՀՀ փաստաբանական դպրոցի անվանումն է՝ **հայերեն լրիվ՝ «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամ,**
 հայերեն կրճատ՝ **«ՀՀ փաստաբանական դպրոց» հիմնադրամ,**
 ռուսերեն լրիվ՝ **Фонд "Школа адвокатов Республики Армения"**
 ռուսերեն կրճատ՝ **Фонд "Школа адвокатов РА"**
 անգլերեն լրիվ՝ **"School of advocates of the Republic of Armenia "** foundation
 անգլերեն կրճատ՝ **"School of advocates of the RA" foundation**
- 1.7 ՀՀ փաստաբանական դպրոցն ունի իր անվանումը պարունակող կլոր կնիք (հայերեն և անգլերեն):
- 1.8 ՀՀ փաստաբանական դպրոցի գտնվելու վայրի հասցեն է Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Զաքիյան փողոց, թիվ 7-3 շենք, իսկ փոստային դասիչը՝ 0010:
- 1.9 ՀՀ փաստաբանական դպրոցի գործունեության ժամկետը չի սահմանափակվում:

II. ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- 2.1** Փաստաբանական դպրոցի հիմնական նպատակներն են՝
- 1) ապահովել Փաստաբանական դպրոցի ունկնդիրների որակավորման ուսուցումը և փաստաբանների շարունակական մասնագիտական վերապատրաստումը.
 - 2) ապահովել Փաստաբանական դպրոցի ունկնդիրների համար անցկացվող որակավորման քննությունների անցկացումը.
 - 3) նպաստել Հայաստանի Հանրապետությունում փաստաբանական ինստիտուտի զարգացմանը, փաստաբանների մասնագիտական կարողությունների կատարելագործմանը և փաստաբանի դերի բարձրացմանը.
 - 4) համալրել Փաստաբանների պալատը մասնագիտորեն պատրաստված անդամներով.
 - 5) նպաստել Փաստաբանական դպրոցի ունկնդիրների գիտակրթական մակարդակի բարձրացմանը.
 - 6) իրականացնել ժամանակակից գիտատեխնիկական և դասավանդման մեթոդների կիրառմամբ կրթական ծրագրեր.
- 2.2** Սույն կանոնադրությանը համապատասխան Փաստաբանական դպրոցը կարող է հետապնդել նաև հետևյալ նպատակները՝
- 1) նպաստել մարդու իրավունքների պաշտպանությանը և ժողովրդավարական ինստիտուտների կայացմանն ու զարգացմանը.
 - 2) բարձրացնել Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների պաշտպանվածության մակարդակը.
 - 3) նպաստել Հայաստանի Հանրապետության օրենսդրության ուսումնասիրմանը, կատարելագործմանը և համապատասխանեցմանը մարդու իրավունքների և ազատությունների ոլորտի հիմնական կոնվենցիաներին և մյուս միջազգային իրավական փաստաթղթերին.
 - 4) ապահովել Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի մշակումը, Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի համեմատական վերլուծությունների և փորձաքննությունների կատարումը Փաստաբանական դպրոցում.
 - 5) կազմակերպել իրավաբանների միջազգային հավաքներ, կոնֆերանսներ, սեմինարներ, իրականացնել իրավաբանների փոխանակման ծրագրեր.
 - 6) ապահովել արտերկրում գործող փաստաբանական ուսումնական հաստատությունների, իրավաբանական կազմակերպությունների և իրավաբանության բնագավառի գրահրատարակչական կազմակերպությունների հետ կապը և համագործակցությունը.
 - 7) աջակցել Հայաստանում իրավաբանության ոլորտի գրահրատարակչության զարգացմանը, իրավաբանական գիտական աշխատությունների, ինչպես նաև իրավաբանական գրականության հրատարակմանը և տարածմանը.
 - 8) նպաստել Հայաստանի և սփյուռքի հայ փաստաբանների,

փաստաբանական կազմակերպությունների և իրավաբանական ուղղվածություն ունեցող ուսումնական հաստատությունների միջև կապերի հաստատմանը և համագործակցությանը.

- 9) նպաստել հայկական փաստաբանության պատմաիրավագիտական արժեքների պահպանմանը, ուսումնասիրմանը և տարածմանը.
- 10) նպաստել բնակչության իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը՝ բնակչության շրջանում օրենքների և իրավական գիտելիքների քարոզչության միջոցով.
- 11) օժանդակել իրավաբանական բուհերում և բուհերի իրավաբանական ֆակուլտետներում ուսումնառության գործընթացի արդյունավետ կազմակերպմանը.
- 12) նպաստել Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում և այլ կրթական հաստատություններում իրավական գիտելիքների տարածմանը.
- 13) նպաստել Փաստաբանական դպրոցի ունկնդիրների և փաստաբանների ոչ մասնագիտական շփումներին, կազմակերպել ոչ պաշտոնական ակումբային հանդիպումներ, ինչպես նաև տարաբնույթ մշակութային և ժամանցային միջոցառումներ:

III.22 ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՄԻՋԱԿԱՆՈՐԵՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

- 3.1** ՀՀ փաստաբանական դպրոցը կարող է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել միայն այն դեպքերում, երբ դա ծառայում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացմանը:
- 3.2** ՀՀ փաստաբանական դպրոցը ձեռնարկատիրական գործունեությունը կարող է իրականացնել անձամբ կամ այդ նպատակով ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել դրանց մասնակից:
- 3.3** ՀՀ փաստաբանական դպրոցը կարող է անձամբ իրականացնել միայն ձեռնարկատիրական գործունեության ստորև նշված տեսակները՝
 - 1) կազմակերպել և իրականացնել ուսումնական ծրագրեր, այդ թվում՝ ունկնդիրների ուսուցումը ու փաստաբանների վերապատրաստումը.
 - 2) կազմակերպել և անցկացնել սեմինարներ, գիտաժողովներ, կլոր սեղաններ և նմանատիպ այլ միջոցառումներ.
 - 3) իրականացնել փորձագիտական (հետազոտական) ծառայություններ.
 - 4) մշակել իրավական ակտերի նախագծեր.
 - 5) օրենքների և նորմատիվ իրավական ակտերի ոչ պաշտոնական հրատարակում, բազմացում կամ պաշտոնական վերահրատարակում.
 - 6) իրավաբանական մասնագիտական գրքերի, ամսագրերի, թերթերի և այլ պարբերականների մեծածախ և մանրածախ առևտուր, ինչպես նաև դրանց հրատարակություն.
 - 7) գույքի վարձակալություն.
 - 8) հանրային սննդի կազմակերպում:

IV.22 ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԽՄԲԵՐԸ

- 4.1** ՀՀ փաստաբանական դպրոցի փաստացի շահառուներն են՝
- 1) ՀՀ փաստաբանների պալատի անդամ փաստաբանները և օտարերկրյա փաստաբանները.
 - 2) ունկնդիրները.
 - 3) ՀՀ փաստաբանների պալատը:
- 4.2** ՀՀ փաստաբանական դպրոցի հնարավոր շահառուներն են՝ փաստաբանների օգնականները, փաստաբանական գրասենյակների կառավարիչները, իրավաբանները, իրավաբանական ֆակուլտետների ուսանողները և ՀՀ փաստաբանական դպրոցի գործունեությանն առնչվող այլ անձինք:

V. ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- 5.1** ՀՀ փաստաբանական դպրոցը ստեղծված է համարվում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից: Պետական գրանցման պահից ՀՀ փաստաբանական դպրոցը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ:
- 5.2** ՀՀ փաստաբանական դպրոցն իրավաբանական անձի կարգավիճակ ձեռք բերելու պահից ունի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրավաբանական անձի համար սահմանված բոլոր իրավունքները և կրում է համապատասխան պարտականություններ:
- 5.3** ՀՀ փաստաբանական դպրոցն իրավունք ունի՝
- 1) անարգել տարածել տեղեկություններ իր գործունեության մասին.
 - 2) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից օրենքով սահմանված կարգով ստանալ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար.
 - 3) ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ) և հիմնարկներ.
 - 4) ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել նրանց մասնակից.
 - 5) իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ.
 - 6) իրականացնել օրենքով չարգելված այլ գործունեություն:
- 5.4** ՀՀ փաստաբանական դպրոցը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան կարող է անդամակցել միջազգային և օտարերկրյա ոչ պետական կազմակերպություններին:
- 5.5** ՀՀ փաստաբանական դպրոցը կարող է համագործակցել ինչպես Հայաստանի Հանրապետությունում պետական և ոչ պետական մարմինների, կազմակերպությունների և հաստատությունների, այնպես էլ արտասահմանյան և միջազգային կազմակերպությունների, ընկերությունների և ուսումնական հաստատությունների հետ:
- 5.6** Փաստաբանական դպրոցը ազատ է կատարելու այն, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքները և ազատությունները:

**VI. ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

- 6.1** ՀՀ փաստաբանական դպրոցը պարտավոր է՝
- 1) գործել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Օրենքին, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և այլ օրենքներին ու իրավական ակտերին, սույն կանոնադրությանը, ինչպես նաև ՀՀ փաստաբանական դպրոցի գործունեությունը կարգավորող այլ իրավական ակտերին համապատասխան.
 - 2) «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում.
 - 3) «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններին.
 - 4) իրականացնել Օրենքով, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև ՀՀ փաստաբանական դպրոցի գործունեությունը կարգավորող այլ իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:
- 6.2** Հայաստանի Հանրապետության օրենքներով կարող են նախատեսվել ՀՀ փաստաբանական դպրոցի համար նաև այլ պարտականություններ:
- 6.3** ՀՀ փաստաբանական դպրոցը չի կարող ստեղծել կամ անդամակցել քաղաքական կամ կրոնական կազմակերպություններին, ինչպես նաև մասնակցել դրանց կառույցների ստեղծմանն ու գործունեությանը:
- 6.4** ՀՀ փաստաբանների պալատը պատասխանատվություն չի կրում ՀՀ փաստաբանական դպրոցի պարտավորությունների համար, իսկ ՀՀ փաստաբանական դպրոցը պատասխանատվություն չի կրում ՀՀ փաստաբանների պալատի պարտավորությունների համար:
- 6.5** ՀՀ փաստաբանական դպրոցն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող ամբողջ գույքով:

VII. ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

- 7.1** ՀՀ փաստաբանական դպրոցն իր գործունեությունն իրականացնում է մարմինների միջոցով:
- 7.2** ՀՀ փաստաբանական դպրոցի մարմիններն են՝
- 1) հոգաբարձուների խորհուրդը՝ ՀՀ փաստաբանական դպրոցի կառավարման խորհուրդը (**այսուհետ՝ Խորհուրդ**).
 - 2) ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենը:

VIII. ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

- 8.1 ՀՀ փաստաբանական դպրոցի կառավարման բարձրագույն մարմինը Խորհուրդն է:
- 8.2 Խորհուրդն իրականացնում է ՀՀ փաստաբանական դպրոցի ընդհանուր կառավարումը և ընթացիկ գործունեության վերահսկողությունը:
- 8.3 Խորհուրդը բաղկացած է վեց անդամից: Խորհուրդը կազմավորվում է ՀՀ փաստաբանների պալատի նախագահից և ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կողմից սույն կանոնադրությամբ սահմանված կարգով նշանակված չորս անդամից և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության մեկ ներկայացուցչից:
- 8.4 Խորհրդի նախագահն ի պաշտոնե ՀՀ փաստաբանների պալատի նախագահն է:
- 8.5 Խորհրդի չորս անդամներին նշանակում է ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջադրմամբ՝ երեք տարի ժամկետով: Սույն կետում նշված չորս անդամներից առնվազն երեքը պետք է լինեն ՀՀ փաստաբաններ: Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ներկայացուցչի թեկնածությունը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից:
- 8.6 Խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվելու դեպքում այդ անդամի փոխարեն նշանակվում է նոր անդամ սույն կանոնադրությամբ նախատեսված կարգով:
- 8.7 Խորհրդի նիստերը կարող են լինել հերթական կամ արտահերթ:
- 8.8 Խորհրդի հերթական նիստերը հրավիրվում են Խորհրդի նախագահի կողմից՝ հաստատված օրակարգով, ըստ անհրաժեշտության, բայց տարեկան չորս անգամից ոչ պակաս:
- 8.9 Խորհրդի անդամները Խորհրդի նիստի օրակարգի, նրա աշխատանքը սկսվելու տեղի, օրվա ու ժամի մասին ստանում են առձեռն կամ փոստով (պատվիրված նամակով կամ էլեկտրոնային փոստով) գրավոր ծանուցում՝ ոչ ուշ, քան նիստի անցկացումից 3 (երեք) օր առաջ:
- 8.10 Խորհրդի արտահերթ նիստերը կարող են գումարվել Խորհրդի առնվազն երկու անդամների գրավոր պահանջով, որը ներկայացվում է Խորհրդի նախագահին: Խորհրդի արտահերթ նիստ հրավիրելու պահանջում նշվում են օրակարգի հարցերը և դրանց քննարկման անհրաժեշտության հիմնավորումը: Խորհրդի նախագահը, ստանալով սույն կետով նախատեսված արտահերթ նիստ հրավիրելու պահանջը, պարտավոր է 30 (երեսուն) օրվա ընթացքում հրավիրել Խորհրդի արտահերթ նիստ՝ պահանջում նշված օրակարգով: Նշված ժամկետում Խորհրդի նախագահի կողմից արտահերթ նիստ չգումարելու դեպքում Խորհրդի արտահերթ նիստ կարող է գումարվել պահանջ ներկայացրած անձանց կողմից՝ նույն օրակարգով:
- 8.11 Սույն կանոնադրության 8.10-րդ կետով նախատեսված Խորհրդի արտահերթ նիստ հրավիրելու դեպքում հրավիրողները սույն կանոնադրության 8.9-րդ կետով սահմանված կարգով Խորհրդի բոլոր անդամներին են ուղարկում Խորհրդի նախագահին հրավիրողների

կողմից ուղղված պահանջի պատճենը և մեկ փաստաթղթի տեսքով բոլոր հրավիրողների կողմից ստորագրված ծանուցումը՝ ոչ ուշ, քան այդ նիստի անցկացման օրվանից 7 (յոթ) օր առաջ, որտեղ պարտադիր պետք է նշված լինի Խորհրդի արտահերթ նիստի օրակարգը, անցկացման տեղը, օրը ու ժամը: Սույն պահանջի հիմքով Խորհրդի նիստում քվորումի բացակայությամբ նիստ չկայանալու դեպքում պահանջի օրակարգով հարցերն ընդգրկվում են, քննարկվում և դրանց վերաբերյալ որոշում է կայացվում Խորհրդի արտահերթ նիստին անմիջապես հաջորդող նիստում:

- 8.12** Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է անդամների կողմից նիստերին անձամբ մասնակցելու միջոցով:
- 8.13** Խորհրդի նիստն իրավագոր է, եթե հրավիրվել է սույն կանոնադրությամբ սահմանված կարգով և նիստին մասնակցում են խորհրդի անդամների կեսից ավելին: Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Չայնի և քվեարկության իրավունքի փոխանցումը խորհրդի մեկ անդամից մյուսին (այդ թվում՝ ցանկացած երրորդ անձի) չի թույլատրվում:
- 8.14** Խորհուրդն իրավունք չունի շեղվել օրակարգից: Խորհուրդը կարող է հետաձգել օրակարգում ընդգրկված կոնկրետ հարցի քննարկումը՝ հարցի քննարկման հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու կամ Խորհրդի անդամների կողմից կատարված դիտողությունները պարզաբանելու նպատակով:
- 8.15** Խորհրդի նիստերը, որպես կանոն, անցկացվում են օրակարգի հարցի հետ անմիջապես առնչություն ունեցող անձի (սույն կետի իմաստով՝ շահագրգիռ անձ) մասնակցությամբ, եթե վերջինս ծանուցվել է նիստին մասնակցելու համար: Բացի Խորհրդի անդամներից և շահագրգիռ անձից, այլ անձինք իրավասու չեն ներկա գտնվել Խորհրդի նիստին, բացառությամբ Խորհրդի նախագահի թույլատրած դեպքերի: Խորհրդի նախագահն իրավունք ունի հարցերի քննարկմանը ներգրավել ՀՀ փաստաբանական դպրոցի աշխատակազմի անդամներին կամ այլ մասնագետներին կամ թույլ տալ նիստին ներկա գտնվել այլ անձանց (այդ թվում՝ լրագրողների):
- 8.16** Յուրաքանչյուր քվեարկությունից առաջ Խորհրդի նախագահը կրկնում է քվեարկության դրվող հարցը ճշգրիտ ձևակերպմամբ, հաշվում և բարձրաձայն հայտարարում է կողմ քվեարկած ձայների թիվը, այնուհետև նույն կարգով հաշվում է դեմ ու ձեռնպահ ձայների թիվը: Խորհրդի նախագահը օրակարգի հարցը քննարկելուց հետո կարող է քվեարկությունը կազմակերպել դռնփակ՝ միայն Խորհրդի անդամների մասնակցությամբ:
- 8.17** Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ, եթե Հայաստանի Հանրապետության օրենքներով այլ կարգ նախատեսված չէ:
- 8.18** ՀՀ փաստաբանական դպրոցի անվանման փոփոխության, ինչպես նաև լուծարման հետ կապված հարցերը լուծվում են Խորհրդի անդամների

երկու երրորդի որոշմամբ:

- 8.19** Եթե Խորհրդի նիստում քննարկվում է Խորհրդի որևէ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա Խորհրդի տվյալ անդամը քվեարկությանը չի կարող մասնակցել: Սույն կետում նշված դեպքում Խորհրդի անդամը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել: Խորհրդի անդամին բացարկ կարող է հայտնել Խորհրդի մեկ այլ անդամը (այդ թվում՝ Խորհրդի նախագահը) կամ սույն կանոնադրության 8.15-րդ կետում նշված շահագրգիռ անձը: Խորհրդի անդամի բացարկի հարցը քննարկում է Խորհուրդը՝ բացարկված Խորհրդի անդամի բացակայությամբ:
- 8.20** Քվեարկության արդյունքներն արտացոլվում են Խորհրդի նիստի արձանագրության մեջ: Խորհրդի նիստերն արձանագրվում են պարզ, թղթային եղանակով՝ հայերենով:
- 8.21** Արձանագրության մեջ նշվում են՝
- 1) նիստի գումարման օրը, ամիսը, տարեթիվը և վայրը.
 - 2) նիստին մասնակցելու իրավունք ունեցող անձանց քանակը.
 - 3) նիստին մասնակցած անձանց քանակը, անունները:
 - 4) նիստի օրակարգը.
 - 5) նիստում կայացած ելույթների հիմնական դրույթները.
 - 6) քվեարկության դրված հարցերը և այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները.
 - 7) նիստի ընդունած որոշումները:
- 8.22** Խորհրդի նիստի արձանագրությունը ստորագրում են տվյալ նիստին մասնակցած Խորհրդի անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:
- 8.23** Խորհրդի նիստերի արձանագրություններից քաղվածքները կազմվում են «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:
- 8.24** Խորհրդի նիստի արդյունքում առանձին ակտի ձևով ընդունված որոշումներն ստորագրում է Խորհրդի նախագահը: Առանձին ակտի ձևով ընդունված որոշումներն երրորդ անձանց ներկայացվելու դեպքում պետք է բովանդակեն նաև քաղվածքների համար «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տեղեկությունները:
- 8.25** Խորհուրդը կարող է նիստերն անցկացնել նաև հեռակա (հարցման) կարգով: Խորհրդի հեռակա նիստն անցկացվում և ամփոփվում է հետևյալ կերպ՝
- 1) Խորհրդի նախագահը էլեկտրոնային փոստով Խորհրդի անդամներին է ուղարկում նիստի օրակարգի հարցերը, հարցերի քվեարկության ամփոփման օրվա (ժամի) և դիրքորոշումն ուղարկելու ժամկետի մասին տեղեկություն (որը չի կարող երկու աշխատանքային օրից պակաս լինել), ինչպես նաև ընդունվող որոշման նախագիծը.
 - 2) Խորհրդի անդամներն օրակարգում ընդգրկված հարցերով որոշումների

նախագծերի վերաբերյալ իրենց դիրքորոշումը էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկում են Խորհրդի նախագահին և Խորհրդի մյուս անդամներին.

- 3) Հարցերի քվեարկության ամփոփման համար հայտարարված օրվա համապատասխան ժամին, Խորհրդի նախագահը ամփոփում է Խորհրդի անդամների կողմից ուղարկված դիրքորոշումները.
- 8.26** Հեռակա (հարցման) կարգով Խորհրդի նիստի ամփոփման վերաբերյալ Խորհրդի նախագահը կայացնում է որոշում:
- 8.27** Հեռակա (հարցման) կարգով չի կարող անցկացվել սույն կանոնադրության 8.29 կետի 1-ին, 3-րդ, 4-րդ, 8-րդ և 13-րդ ենթակետերում նշված հարցերի քննարկման անհրաժեշտությամբ պայմանավորված խորհրդի նիստերը:

***Խորհրդի, Խորհրդի նախագահի և անդամների իրավասությունները
և դրանց դադարման կարգը***

- 8.28** Խորհրդի իրավասությունները սահմանվում են Օրենքով, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ:
- 8.29** Խորհուրդը՝
 - 1) նշանակում և ազատում է ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենին՝ Խորհրդի նախագահի ներկայացմամբ.
 - 2) հաստատում է ՀՀ փաստաբանական դպրոցի ռազմավարական ծրագիրը.
 - 3) հաստատում է ՀՀ փաստաբանական դպրոցի տարեկան բյուջեն՝ ըստ հոդվածների, ինչպես նաև կատարում է դրանում փոփոխություններ կամ լրացումներ.
 - 4) լսում և հաստատում (մերժում) է ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի հաշվետվությունները.
 - 5) հաստատում է դիմորդների կողմից վճարվող գումարների չափը, ունկնդիրների ուսման վարձի չափը և դրանց վճարման կարգերը.
 - 6) հաստատում է ՀՀ փաստաբանական դպրոցի բնականոն գործունեությունը ապահովող ներքին իրավական ակտերը, այդ թվում՝ ՀՀ փաստաբանական դպրոցի աշխատողների և ունկնդիրների ներքին կարգապահական կանոնները, աշխատակազմի հաստիքացուցակը և կառուցվածքը.
 - 7) ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի հաստատած ուղենիշներին համապատասխան՝ հաստատում է փաստաբանների վերապատրաստման և ունկնդիրների ուսուցման ծրագրերը.
 - 8) ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի ներկայացմամբ քննարկում և լուծում է ունկնդրի հեռացման հարցը.
 - 9) անվավեր է ճանաչում, վերացնում կամ կասեցնում է Խորհրդի կամ ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի ընդունած անհատական կամ ներքին իրավական ակտերը.
 - 10) ձևավորում է ՀՀ փաստաբանական դպրոցի՝ սույն կանոնադրությամբ չնախատեսված այլ մարմինները.
 - 11) ստեղծում է տնտեսական ընկերություններ կամ որոշում է ընդունում

տնտեսական ընկերություններում մասնակցության մասին, ինչպես նաև ստեղծում է առանձնացված ստորաբաժանումներ և հիմնարկներ ու ընդունում է դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշումներ.

- 12) ընտրում է ՀՀ փաստաբանական դպրոցի աուդիտ իրականացնող անձին (աուդիտորին).
- 13) քննարկում է դիմորդների բողոքները, ինչպես նաև ունկնդիրների՝ քննությունների արդյունքների վերաբերյալ բողոքները և կայացնում համապատասխան որոշում.
- 14) քննարկում է ունկնդիրների ուսուցման կազմակերպմանն ուղղված՝ ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի գործողությունների դեմ բողոքները և կայացնում է որոշում.
- 15) իրականացնում է Օրենքով, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և ՀՀ փաստաբանական դպրոցի կանոնադրությամբ նախատեսված, ինչպես նաև ՀՀ փաստաբանական դպրոցի այլ մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

8.30 Խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերը չեն կարող փոխանցվել այլ մարմնի:

8.31 Խորհրդի անդամներն իրավունք ունեն՝

- 1) առաջարկություններ ներկայացնել Խորհրդի նիստերի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ.
- 2) նախապատրաստել և Խորհրդի քննարկմանը ներկայացնել հարցեր, առաջարկություններ և որոշումների նախագծեր.
- 3) ստանալու տեղեկություններ ՀՀ փաստաբանական դպրոցի գործունեությանը վերաբերող ցանկացած հարցի վերաբերյալ.
- 4) դուրս գալ ՀՀ փաստաբանական դպրոցի խորհրդի անդամությունից.
- 5) իրականացնել Օրենքով, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

8.32 Խորհրդի անդամներն իրենց պարտականությունները կատարում են առանց վարձատրության:

8.33 Խորհրդի անդամները պարտավոր են՝

- 1) անձամբ մասնակցել Խորհրդի նիստերին.
- 2) իրենց պարտականությունների կատարման ընթացքում գործել՝ ելնելով ՀՀ փաստաբանական դպրոցի շահերից:

8.34 Խորհրդի նախագահը՝

- 1) կազմակերպում է Խորհրդի աշխատանքները.
- 2) անհրաժեշտության դեպքում կազմավորում է Խորհրդի ժամանակավոր հանձնախմբեր.
- 3) գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում է դրանք.
- 4) կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը.
- 5) ստորագրում է Խորհրդի որոշումները.
- 6) Խորհրդի անդամների կազմից նշանակում է Խորհրդի փոխնախագահ.
- 7) Խորհրդի նիստին մասնակցելու համար ըստ անհրաժեշտության

հրավիրում է մասնագետներ կամ շահագրգիռ անձանց.

- 8) իրականացնում է Օրենքով, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:
- 8.35** Խորհրդի նախագահի լիազորությունները դադարեցվում են ՀՀ փաստաբանների պալատի նախագահի լիազորությունները դադարեցվելու պահից:
- 8.36** Խորհրդի նախագահի լիազորությունները դադարեցվելու դեպքում լիազորությունները ստանձնում է ՀՀ փաստաբանների պալատի նոր նախագահը, իսկ նոր նախագահ չընտրվելու դեպքում՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի ժամանակավոր պաշտոնակատարը:
- 8.37** Խորհրդի անդամի լիազորությունը դադարում է՝
- 1) ՀՀ փաստաբանական դպրոցի խորհրդի նախագահին տրված գրավոր դիմումի հիման վրա.
 - 2) նրա կողմից իր պարտականությունները պատշաճ չկատարելու դեպքում՝ նրա կողմից անհարգելի պատճառով մեկ տարվա ընթացքում ՀՀ փաստաբանական դպրոցի խորհրդի չորս նիստերին բացակայելու դեպքում՝ ՀՀ փաստաբանական դպրոցի խորհրդի մնացած անդամների ձայների առնվազն 3/4-ով.
 - 3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու դեպքում.
 - 4) նրա մահվան դեպքում.
 - 5) լիազորությունների ժամկետի ավարտման դեպքում.
 - 6) օրենքով նախատեսված այլ դեպքերում:
- 8.38** Փաստաբանական դպրոցի խորհրդի անդամի լիազորությունը դադարելու դեպքում նրա փոխարեն նոր անդամ նշանակվում է նախկին անդամի նշանակման կարգով, ոչ ուշ, քան ՀՀ փաստաբանական դպրոցի խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի ծանուցումն ստանալու օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում:
- 8.39** Խորհրդի անդամի լիազորությունները համարվում են դադարած՝
- 1) Խորհրդի նախագահին տրված գրավոր դիմումի հիման դիմումը ներկայացնելու հաջորդ օրվանից.
 - 2) նրա մահվան դեպքում՝ մահվան օրվանից.
 - 3) լիազորությունների ժամկետի ավարտման օրվանից:
- 8.40** ՀՀ փաստաբանական դպրոցի խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին տեղեկացված լինելու օրվանից ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում Փաստաբանական դպրոցի տնօրենը տեղեկացնում է Փաստաբանների պալատի խորհրդին:

IX. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԸ

- 9.1** ՀՀ փաստաբանական դպրոցի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենը:

- 9.2** ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենին սույն կանոնադրությամբ սահմանված կարգով պաշտոնի է նշանակում Խորհուրդը՝ Խորհրդի նախագահի առաջարկությամբ՝ Խորհրդի անդամների ընդհանուր թվի մեծամասնությամբ:
- 9.3** ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի պաշտոնին հավակնող անձին ներկայացվող չափանիշներն են՝
- հայերենի գերազանց իմացություն,
 - առնվազն մեկ օտար լեզվի պատշաճ իմացություն,
 - բարձրագույն իրավաբանական (իրավագիտական) կրթություն,
 - փաստաբանական գործունեության արտոնագիր:
- 9.4** Խորհրդի կողմից Խորհրդի նախագահի առաջադրված տնօրենի թեկնածությունը չընդունվելու դեպքում Խորհրդի նախագահը քսան օրվա ընթացքում առաջադրում է այլ թեկնածու:
- 9.5** ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենը Խորհրդի նախագահի ներկայացմամբ պաշտոնից կարող է ազատվել, եթե՝
- 1) առկա են աշխատանքային պայմանագրով նախատեսված հիմքերը.
 - 2) սույն կանոնադրությամբ սահմանված պարբերականությամբ Խորհրդին անհարգելի պատճառներով տնօրենը չի ներկայացրել հաշվետվությունը.
 - 3) առկա են ֆինանսական կամ ուսումնական գործընթացի կազմակերպման էական խախտումներ.
 - 4) տնօրենը խախտել է սույն կանոնադրության 9.10-րդ կամ 17.6-րդ կետի պահանջը:

ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի հետ աշխատանքային պայմանագիրը ստորագրում է Խորհրդի նախագահը:

ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի լիազորությունները

- 9.6** ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի լիազորությունները սահմանվում են Օրենքով, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն կանոնադրությամբ, Խորհրդի ընդունած իրավական ակտերով և նրա հետ կնքված աշխատանքային պայմանագրով:
- 9.7** ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի իրավասությանն են պատկանում Փաստաբանական դպրոցի ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը՝ բացառությամբ Օրենքով, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով և սույն կանոնադրությամբ՝ Խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի:
- 9.8** ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենը՝
- 1) ղեկավարում է ՀՀ փաստաբանական դպրոցի կողմից իրականացվող ունկնդիրների ուսուցման և փաստաբանների շարունակական վերապատրաստման գործընթացները.
 - 2) մշակում և Խորհրդի հաստատմանն է ներկայացնում ՀՀ փաստաբանական դպրոցի ռազմավարական ծրագրերը.
 - 3) մշակում և Խորհրդի հաստատմանն է ներկայացնում ՀՀ փաստաբանական

դպրոցի տարեկան բյուջեն՝ ըստ հոդվածների, ինչպես նաև դրա փոփոխությունները կամ լրացումները.

- 4) կազմում և Խորհրդի հաստատմանն է ներկայացնում հաշվետվություններ.
 - 5) մշակում և Խորհրդի հաստատմանն է ներկայացնում դիմորդների, ունկնդիրների կողմից վճարվող գումարների չափի վերաբերյալ հիմնավորումներ.
 - 6) մշակում և Խորհրդի հաստատմանն է ներկայացնում ՀՀ փաստաբանական դպրոցի բնականոն գործունեությունն ապահովող ներքին իրավական ակտերը, այդ թվում՝ ՀՀ փաստաբանական դպրոցի աշխատողների և ունկնդիրների ներքին կարգապահական կանոնները, աշխատակազմի հաստիքացուցակը և կառուցվածքը և այլն.
 - 7) մշակում և Խորհրդի հաստատմանն է ներկայացնում փաստաբանների վերապատրաստման և ունկնդիրների ուսուցման ծրագրերը.
 - 8) կազմակերպում է Խորհրդի որոշումների կատարումը.
 - 9) Խորհրդի քննարկմանը և լուծմանն է ներկայացնում ունկնդրի հեռացման հարցը.
 - 10) ՀՀ փաստաբանական դպրոցի կանոնադրությամբ սահմանված կարգով ունկնդրին ենթարկում է կարգապահական պատասխանատվության.
 - 11) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է ՀՀ փաստաբանական դպրոցի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում ՀՀ փաստաբանական դպրոցի անունից.
 - 12) ներկայացնում է ՀՀ փաստաբանական դպրոցը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում.
 - 13) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, ընդունում է որոշումներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
 - 14) գործում է առանց լիազորագրի և տալիս է լիազորագրեր.
 - 15) բանկերում բացում է ՀՀ փաստաբանական դպրոցի հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ.
 - 16) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է ՀՀ փաստաբանական դպրոցի աշխատակիցներին.
 - 17) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.
 - 18) իրականացնում է Օրենքով, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:
- 9.9** ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենն իր բացակայության ժամանակ իր պարտականությունների կատարումը կարող է դնել աշխատակազմի որևէ անդամի վրա:
- 9.10** ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենն այլ կազմակերպություններում կարող է վճարովի պաշտոններ զբաղեցնել միայն Խորհրդի համաձայնությամբ:
- 9.11** ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի կողմից այլ կազմակերպությունում աշխատելը կամ փաստաբանական գործունեություն իրականացնելը

չպետք է խոչընդոտի ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի պարտականությունների կատարմանը:

ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի հաշվետվությունները և պարբերականությունը

9.12 ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենը յուրաքանչյուր տարվա համար Խորհրդին է ներկայացնում երեք տեսակի հաշվետվություններ՝

- 1) ընդհանուր ֆինանսական հաշվետվություն,
- 2) ուսումնական գործընթացի կազմակերպման հաշվետվություն,
- 3) վերապատրաստման գործընթացի կազմակերպման հաշվետվություն:

9.13 Յուրաքանչյուր տարվա համար ընդհանուր ֆինանսական հաշվետվությունը տնօրենը ներկայացնում է ֆինանսական տարվա ավարտից հետո՝ երեք ամսվա ընթացքում, որը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝

- 1) մուտքերը,
- 2) ծախսերը,
- 3) կատարված ծախսերի համեմատությունները հաստատված բյուջեի հետ և շեղումների դեպքում՝ դրանց պարզաբանումները,
- 4) մեկ միլիոն ՀՀ դրամը գերազանցող գործարքների ցանկը և բնույթը,
- 5) Խորհրդի սահմանած այլ տեղեկություններ:

9.14 Յուրաքանչյուր տարվա համար ուսումնական գործընթացի կազմակերպման հաշվետվությունը Տնօրենը ներկայացնում է տարվա ավարտից հետո՝ երեք ամսվա ընթացքում: Տարվա հաշվարկի համար, որպես առաջին օր, հիմք է ընդունվում տվյալ տարվա առաջին հոսքի դասընթացի առաջին օրը: Սույն կետում նշված հաշվետվության բովանդակությունը սահմանում է Խորհուրդը:

9.15 Յուրաքանչյուր տարվա համար վերապատրաստման գործընթացի կազմակերպման հաշվետվությունը Տնօրենը ներկայացնում է ֆինանսական տարվա ավարտից հետո՝ երեք ամսվա ընթացքում: Սույն կետում նշված հաշվետվության բովանդակությունը սահմանում է Խորհուրդը:

X.ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՈՒՆԿՆԴԻԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

10.1 ՀՀ փաստաբանական դպրոցի ունկնդիր (այսուհետև՝ ունկնդիր) կարող է լինել այն գործունակ ֆիզիկական անձը (դիմորդը), ով ունի իրավաբանական կրթության բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորման աստիճան՝ բացառությամբ, երբ նա դատապարտվել է դիտավորությամբ կատարված հանցագործության համար, և նրա դատվածությունը մարված կամ հանված չէ:

10.2 Ունկնդիրների քանակական կազմը, ինչպես նաև ընդունելության քննությունների անցողիկ միավորների նվազագույն շեմը յուրաքանչյուր

(այդ թվում՝ հեռավար) հոսքի ընդունելության քննության համար սահմանում է Խորհուրդը՝ Խորհրդի նախագահի ներկայացմամբ: Խորհուրդը կարող է ընդունելության քննությունները, ինչպես նաև ուսումնական գործընթացը կազմակերպել ըստ մասնագիտական ուղղվածության:

- 10.3** ՀՀ փաստաբանական դպրոցի ընդունելության գործընթացը, այդ թվում՝ ընդունելության քննությունները, կազմակերպում և անցկացնում է ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենը՝ ձևավորելով ժամանակավոր հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով): Հանձնաժողովի նախագահն ի պաշտոնե հանդիսանում է ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենը:
- 10.4** ՀՀ փաստաբանական դպրոցի ընդունելության քննությունների կազմակերպման և անցկացման կարգը սահմանում է Խորհուրդը:
- 10.5** Սույն կանոնադրության 10.1 կետով նախատեսված անձն ունկնդրի կարգավիճակ է ձեռք բերում, եթե՝
- 1) հաջողությամբ հաղթահարել է ընդունելության քննության գրավոր փուլը, այն է՝ թեսթի լուծման արդյունքներով ստացել է Խորհրդի կողմից սահմանված անցողիկ նվազագույն միավորները և ընդգրկվել է Խորհրդի կողմից սահմանված անցողիկ տեղերի քանակական կազմում (ստացել է մրցութային անհրաժեշտ միավորներ), և
 - 2) հաջողությամբ հաղթահարել է ընդունելության քննության բանավոր փուլը, այն է՝ հարցազրույցի արդյունքում ստացել է Խորհրդի կողմից սահմանված անցողիկ միավորներ:
- Եթե ընդունելության քննության գրավոր փուլի անցողիկ վերջին տեղին հավակնում են հավասար միավորներ ստացած մեկից ավելի դիմորդներ, ապա բոլոր այդ դիմորդները ձեռք են բերում բանավոր փուլին մասնակցելու իրավունք:
- 10.6** Առնվազն տասը տարվա փաստաբանի, քննիչի, դատախազի կամ դատավորի աշխատանքային (մասնագիտական) ստաժ կամ իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող դիմորդը (այսուհետ՝ Հատուկ դիմորդ) կարող է ունկնդրի կարգավիճակ ստանալ ընդունելության քննությունների միայն բանավոր փուլը հաղթահարելու դեպքում՝ Խորհրդի կողմից սահմանված Հատուկ դիմորդների՝ տվյալ ընդունելության հոսքի առավելագույն սահմանաքանակի շրջանակում:
- 10.7** ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի առաջարկով (որոշմամբ) Հատուկ դիմորդների ընդունելության անցկացման վերաբերյալ որոշումը կայացնում է Խորհուրդը, որտեղ նշվում է դիմումների ընդունման ժամանակահատվածը և ուսուցումը սկսելու ժամկետը:
- 10.8** Եթե ՀՀ փաստաբանական դպրոցին դիմել են Խորհրդի սահմանաքանակը գերազանցող Հատուկ դիմորդներ, ապա ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենը նրանց կազմից ընտրում է ունկնդիրներին՝ Խորհրդի սահմանված կարգով:

ՀՀ փաստաբանական դպրոցի ունկնդրի իրավունքները և

պարտականությունները

10.9 ՀՀ փաստաբանական դպրոցում ուսուցում անցնող ունկնդիրն իրավունք ունի՝

- 1) ստանալու գիտության և տեխնիկայի ժամանակակից մակարդակին համապատասխանող գիտելիք, հաճախելու ՀՀ փաստաբանական դպրոցում անցկացվող դասախոսություններին.
- 2) օգտվելու ՀՀ փաստաբանական դպրոցի գրադարանից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական, բուժական, մարզական և այլ ստորաբաժանումների ծառայություններից (առկայության դեպքում).
- 3) ըստ նախասիրությունների՝ մասնակցելու ՀՀ փաստաբանական դպրոցում անցկացվող գիտահետազոտական աշխատանքներին, սեմինարներին եւ գիտաժողովներին.
- 4) բողոքարկելու ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի հրամաններն ու որոշումները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով.
- 5) Խորհրդի կողմից սահմանված դեպքում օգտվելու ուսման վարձի մասամբ կամ լրիվ փոխհատուցման իրավունքից.
- 6) ծանոթանալու ՀՀ փաստաբանական դպրոցի կանոնադրությանը և ՀՀ փաստաբանական դպրոցի գործունեությունը կարգավորող ներքին իրավական ակտերին.

ՀՀ փաստաբանական դպրոցում ուսուցում անցնող ունկնդիրն ունի նաև Օրենքով, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև ՀՀ փաստաբանական դպրոցի գործունեությունը կարգավորող այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ:

10.10 Արգելվում է ունկնդիրներին արտաուսումնական աշխատանքում ներգրավելը՝ առանց ունկնդրի գրավոր համաձայնության:

10.11 Ունկնդիրը պարտավոր է՝

- 1) հաճախել ՀՀ փաստաբանական դպրոցում կազմակերպվող դասընթացներին.
- 2) մասնակցել գործնական ուսուցմանը (փորձաշրջանին).
- 3) խնամքով վերաբերվել ՀՀ փաստաբանական դպրոցի գույքին, իսկ գույքը վնասելու, օգտագործման համար ոչ պիտանի դարձնելու կամ ոչնչացնելու դեպքում՝ հատուցել պատճառված վնասն ամբողջությամբ.
- 4) պահպանել ՀՀ փաստաբանական դպրոցի կանոնադրության և ներքին իրավական այլ ակտերի պահանջները.
- 5) կատարել ՀՀ փաստաբանական դպրոցի մարմինների որոշումները.
- 6) սահմանված ժամկետներում կատարել իրեն տրված բոլոր ուսումնական առաջադրանքները.
- 7) բարձր պահել ՀՀ փաստաբանական դպրոցի պատիվն ու հեղինակությունը:

10.12 Ունկնդիրները պարտավոր են ՀՀ փաստաբանական դպրոցի հետ կնքել

ՀՀ փաստաբանական դպրոցում ուսուցումը անցնելու (ուսումնասիրության) վերաբերյալ պայմանագիր՝ ՀՀ փաստաբանական դպրոցի սահմանած ժամկետում:

XI. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ

- 11.1 Ունկնդիրը ենթակա է կարգապահական պատասխանատվության Օրենքի, սույն կանոնադրության և ՀՀ փաստաբանական դպրոցի գործունեությունը կարգավորող այլ իրավական ակտերի պահանջները խախտելու դեպքերում:
- 11.2 Ունկնդրի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգը սահմանվում է Օրենքով, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև ունկնդիրների վարքագծի և ներքին կարգապահական կանոններով:
- 11.3 Կարգապահական վարույթը հարուցվում է ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի հրամանով՝ ունկնդրի կողմից կարգապահական խախտման վերաբերյալ համապատասխան հաղորդման կամ դիմումի (զեկուցագրի) հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ:
- 11.4 Կարգապահական վարույթի արդյունքներով ունկնդրի նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական տույժերի հետևյալ տեսակները՝
 - 1) նկատողություն.
 - 2) խիստ նկատողություն.
 - 3) ՀՀ փաստաբանական դպրոցից հեռացում:
- 11.5 Ունկնդրին նկատողություն, խիստ նկատողություն հայտարարում է ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենը: Անհրաժեշտ հիմքերի առկայության դեպքում ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենը դիմում է Խորհրդին՝ միջնորդելով քննարկել ունկնդրի՝ ՀՀ փաստաբանական դպրոցից հեռացման հարցը:
- 11.6 Մինչև կարգապահական տույժի կիրառումը ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենն ունկնդրից պետք է պահանջի գրավոր բացատրություն և սահմանի գրավոր բացատրություն ներկայացնելու համար ողջամիտ ժամկետ: Ունկնդրի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում բացատրություն չներկայացնելու դեպքում կարգապահական տույժ կարող է կիրառվել առանց բացատրության: Կարգապահական տույժը կարող է կիրառվել արարքի բացահայտումից ոչ ուշ, քան մեկ ամսվա և կատարումից ոչ ուշ, քան վեց ամսվա ընթացքում՝ չհաշված ունկնդրի հարգելի բացակայության ժամանակահատվածը:
- 11.7 Ունկնդիրը կարող է իր նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու մասին ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի որոշումը բողոքարկել Խորհրդին՝ որոշումը ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում:

XII. ՈՒՆԿՆԴՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

- 12.1 Ունկնդրի ուսուցման ծրագրերը պետք է համապատասխանեն փաստաբանական գործունեությամբ զբաղվելու համար անհրաժեշտ

գիտելիքների պահանջներին:

- 12.2** ՀՀ փաստաբանական դպրոցում կրթական ծրագրերն իրականացվում են ինչպես առկա (ստացիոնար), այնպես էլ հեռավար (դիստանցիոն) կարգով: Հեռավար ուսուցման կարգը հաստատում է Խորհուրդը՝ Խորհրդի նախագահի ներկայացմամբ:
- 12.3** ՀՀ փաստաբանական դպրոցում ուսուցումն իրականացվում է երկու փուլով՝ տեսական ուսուցում և գործնական ուսուցում (փորձաշրջան):
- 12.4** Իրավաբանի՝ առնվազն հինգ տարվա մասնագիտական ստաժ ունեցող ունկնդրի ուսուցումը, իրականացվում է պարզեցված ընթացակարգով, իսկ մնացած ունկնդիրները ուսուցումը՝ ընդհանուր ընթացակարգով:
- 12.5** Սույն կանոնադրության իմաստով իրավաբանի մասնագիտական ստաժ է համարվում բարձրագույն մասնագիտական (իրավաբանական, իրավագիտական) կրթություն ստանալուց հետո անձի մասնագիտական (իրավաբանական, իրավագիտական) ստաժը:
- 12.6** Ուսուցումը ընդհանուր ընթացակարգով իրականացվում է 12 (տասներկու) ամիս տևողությամբ:
- 12.7** Պարզեցված ընթացակարգով ուսուցման տևողությունը սահմանվում է 6 (վեց) ամիս:
- 12.8** Խորհրդի որոշմամբ ՀՀ փաստաբանական դպրոցում պարզեցված ընթացակարգով ուսուցման ծրագիրը կարող է տարբերակվել մյուս պարզեցված ընթացակարգով ուսուցում անցնող ունկնդիրների ծրագրից, հետևյալ ունկնդիրների համար՝
- 1) առնվազն տաս տարվա իրավաբանի մասնագիտական ստաժ ունեցող ունկնդրի համար.
 - 2) առնվազն հինգ տարվա իրավաբանի մասնագիտական ստաժ և իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի աստիճան ունեցող ունկնդրի համար:
- 12.9** Խորհուրդը կարող է սահմանել ունկնդրի գիտելիքների գնահատման համակարգ:
- 12.10** Ուսուցումը սկսվում է ընդունելության քննության արդյունքների ամփոփումից հետո՝ Խորհրդի որոշմամբ հայտարարված օրվանից:
- 12.11** Ունկնդիրը կարող է հեռացվել ՀՀ փաստաբանական դպրոցից՝
- 1) ուսման վարձը ժամանակին չվճարելու դեպքում.
 - 2) տեսական ուսուցման փուլում՝ Խորհրդի հաստատած ակադեմիական ժամերի քանակով անհարգելի բացակայության դեպքում, ինչպես նաև Խորհրդի սահմանած գիտելիքների գնահատման համակարգով նախատեսված պայմանները չբավարարելու դեպքում.
 - 3) գործնական ուսուցման փուլում՝ գործնական ուսուցման կազմակերպման և անցկացման կարգով սահմանված պահանջները չկատարելու դեպքում.
 - 4) ՀՀ փաստաբանական դպրոցի ունկնդիրների վարքագիծը սահմանող ներքին իրավական ակտի կանոնների կոպիտ խախտման դեպքում:

Ունկնդրի հեռացման դեպքում ունկնդրի վճարած ուսման վարձը (ուսումնառության գումարը) չի վերադարձվում:

Տեսական ուսուցումը և փորձաշրջանի անցկացումը

- 12.12** ՀՀ փաստաբանական դպրոցում տեսական ուսուցումը կազմակերպվում է դասախոսությունների, գործնական (սեմինար) պարապմունքների, պրակտիկ աշխատանքների, խորհրդատվության, ուսումնական արդի այլ եղանակներով:
- 12.13** Փորձաշրջանի անցկացման կարգը սահմանվում է սույն կանոնադրությամբ:
- 12.14** Փորձաշրջանի անցկացման կարգը սահմանվում է սույն կանոնադրությամբ:
- 12.15** Բոլոր ունկնդիրների համար փորձաշրջան անցնելը պարտադիր է:
- 12.16** Ունկնդրի փորձաշրջանը փաստաբանական գրասենյակում անցնում է փաստաբան ղեկավարի, իսկ Հաստատությունում՝ այլ ղեկավարի մոտ: Փաստաբան-ղեկավարի ընտրության կարգը սահմանում է Խորհուրդը:
- 12.17** Փաստաբան-ղեկավարը կամ ղեկավարը պարտավոր է ունկնդրի փորձաշրջանը կազմակերպել Խորհրդի կողմից սահմանված ծրագրերին համապատասխան և փորձաշրջանի ավարտից հետո տրամադրել սահմանված ձևի դրական կամ բացասական գրավոր կարծիք:
- 12.18** Ունկնդրի կողմից փորձաշրջան անցնելու հսկողությունը իրականացնում է փորձաշրջանի համակարգողը:
- 12.19** Փորձաշրջանի համակարգողը ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի կողմից նշանակված անձն է: Փորձաշրջանի համակարգող կարող է նշանակվել ինչպես ՀՀ փաստաբանական դպրոցի դասախոսը, այնպես էլ այլ անձ:
- 12.20** Փորձաշրջանի համակարգողը կարող է միաժամանակ հսկողություն իրականացնել մի քանի ունկնդիրների նկատմամբ:
- 12.21** Փորձաշրջանի արդյունքներն ամփոփվում են Խորհրդի սահմանած կարգով:
- 12.22** Փորձաշրջանի արդյունքների ամփոփումից առաջ յուրաքանչյուր ունկնդրի համար փորձաշրջանի համակարգողը տալիս է փորձաշրջանի ընթացքի մասին եզրակացություն, որտեղ նշվում է ունկնդրի կողմից կատարված գործնական աշխատանքների ցանկը, ղեկավարի համառոտ կարծիքը, փորձաշրջանի ընթացքում կազմակերպված միջոցառումներին մասնակցելու վերաբերյալ տեղեկատվություն: Նշված եզրակացության հիման վրա Փաստաբանական դպրոցի տնօրենի կողմից ձևավորված համապատասխան հանձնաժողովը ամփոփում է փորձաշրջանի արդյունքները կայացնելով որոշում՝ ունկնդրի կողմից փորձաշրջանը անցած կամ չանցած լինելու վերաբերյալ:
- 12.23** Փորձաշրջանը անցած չհամարվելու դեպքում ունկնդիրը զրկվում է որակավորման քննություններին մասնակցելու իրավունքից և նրա ուսման համար վճարած վարձավճարը չի վերադարձվում: Որակավորման քննություններին մասնակցելու իրավունքից զրկված ունկնդիրն իրավունք ունի անմիջապես հաջորդող փորձաշրջանի

ընթացքում ևս մեկ անգամ ընդհանուր կարգով անցնել փորձաշրջան՝ Խորհրդի կողմից սահմանված վճարումը կատարելու պայմանով: Երկրորդ անգամ փորձաշրջանի արդյունքներով բացասական եզրակացություն ստացած ունկնդիրը վերստին կարող է մասնակցել որակավորման քննությանը փաստաբանական դպրոցում ընդհանուր հիմունքներով կրկին անգամ ուսուցում անցնելու դեպքում:

12.24 ՀՀ փաստաբանական դպրոցի կրթական ծրագրերով ուսումնառությունն ավարտած ունկնդիրներին տրվում է ՀՀ փաստաբանական դպրոցի ավարտական փաստաթուղթ՝ հավաստագիր:

XIII.ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

13.1 Որակավորման քննությունը փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալու միասնական քննությունն է, որին մասնակցելու իրավունք ունեն միայն ՀՀ փաստաբանական դպրոցում համապատասխան ուսուցում անցած և ՀՀ փաստաբանական դպրոցի ավարտական փաստաթուղթ ունեցող ունկնդիրները:

13.2 ՀՀ փաստաբանական դպրոցի ունկնդիրների որակավորման քննություններն անցկացնում է ՀՀ փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը: ՀՀ փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի աշխատանքներին նյութական, տեխնիկական և անհրաժեշտ այլ աջակցություն է ցուցաբերում ՀՀ փաստաբանական դպրոցը: ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդն ընդունում է որոշում, որով էլ սահմանվում են որակավորման քննության չափանիշները (ուղենիշները), ինչպես նաև որակավորման քննության անցկացման հետևյալ ձևերից մեկը կամ մի քանիսը՝ հարցաշարեր, թեստեր, խնդիրներ, գործնական աշխատանքներ (բողոք, հայցադիմում և այլն):

13.3 Որակավորման քննություններն անցկացվում է Օրենքով, ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով՝ ՀՀ փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի կողմից:

13.4 Որակավորման քննության կազմակերպման և անցկացման կարգը սահմանում է ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը:

13.5 Որակավորման քննությունները չհանձնած ունկնդիրը վերստին որակավորման քննություն հանձնելու համար պարտավոր է ՀՀ փաստաբանական դպրոցում անցնել հատուկ ծրագրով ուսուցում: Երկրորդ անգամ որակավորման քննություններ չհանձնած ունկնդիրը վերստին կարող է մասնակցել որակավորման քննությանը ՀՀ փաստաբանական դպրոցում ընդհանուր հիմունքներով կրկին ուսուցում անցնելու դեպքում:

XIV.ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

- 14.1 Փաստաբանների վերապատրաստման կրթական ծրագրերը իրականացվում են փաստաբանական գործունեությամբ զբաղվող փաստաբանների համար կրթական պահանջմունքների բավարարման նպատակով:
- 14.2 ՀՀ փաստաբանական դպրոցի կողմից կազմակերպվող վերապատրաստման համար գանձվող վճարի չափը և կարգը սահմանում է ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը:

**XV. ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ**

- 15.1 Խորհրդի որոշմամբ անկախ աուդիտորը նվազագույնը տարին մեկ անգամ պետք է իրականացնի ՀՀ փաստաբանական դպրոցի ֆինանսական գործունեության աուդիտ (հերթական աուդիտ):
- 15.2 ՀՀ փաստաբանական դպրոցի աուդիտը չի կարող իրականացվել անընդմեջ նույն անձի (աուդիտորի) կողմից:
- 15.3 Խորհրդի որոշմամբ կարող է անցկացվել նաև արտահերթ աուդիտորական ստուգում:

XVI. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

- 16.1 ՀՀ փաստաբանական դպրոցը յուրաքանչյուր տարի պարտավոր է օրենքով սահմանված կարգով և ժամկետում հրապարակել հաշվետվություն իր գործունեության մասին:
- 16.2 ՀՀ փաստաբանական դպրոցը պարտավոր է սույն կանոնադրությամբ նախատեսված շահառուների կամ իրավասու պետական մարմինների պահանջով հնգօրյա ժամկետում նրանց տրամադրել իր կանոնադրության, ինչպես նաև կանոնադրությունում կատարված լրացումների և փոփոխությունների պատճենները: Նշված փաստաթղթերն այդ անձանց առաջին անգամ տրամադրվում են անվճար:

**XVII. ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԳՈՒՅՔԸ, ԴՐԱ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԵՎ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

- 17.1 ՀՀ փաստաբանական դպրոցի սկզբնական միջոցներն են ՀՀ փաստաբանների պալատի կողմից ստեղծման պահին փոխանցված նյութական և (կամ) ֆինանսական միջոցները:
- 17.2 ՀՀ փաստաբանական դպրոցի գույքը տնօրինում է ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենը՝ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:
- 17.3 ՀՀ փաստաբանների պալատի կողմից ՀՀ փաստաբանական դպրոցին հանձնված գույքը ՀՀ փաստաբանական դպրոցի սեփականությունն է: ՀՀ փաստաբանական դպրոցն այդ գույքը կարող է օգտագործել միայն իր կանոնադրությամբ սահմանված նպատակներով:

- 17.4** ՀՀ փաստաբանական դպրոցի գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել՝
- 1) ՀՀ փաստաբանների պալատի ներդրումը,
 - 2) ֆիզիկական և իրավաբանական անձանց, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների, նվիրատվությունները և նվիրաբերությունները, դրամական մուտքերը ՀՀ պետական բյուջեից,
 - 3) դրամաշնորհները,
 - 4) դիմորդներից ստացած վճարները,
 - 5) փաստաբաններից և ունկնդիրներից ստացված վերապատրաստման կամ ուսման վճարը,
 - 6) ՀՀ փաստաբանական դպրոցի կողմից իրականացված կրթական գործունեությունից ստացված եկամուտները,
 - 7) ՀՀ փաստաբանական դպրոցի կողմից ստեղծած կամ իր մասնակցությամբ տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները,
 - 8) հանգանակությունները՝ միջոցներ, որոնք ստացվում են դրանց կուտակմանն ուղղված գործունեությունից,
 - 9) օրենքով չարգելված այլ միջոցներ:

17.5 ՀՀ փաստաբանական դպրոցը «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված կարգով իր հայեցողությամբ տիրապետում, տնօրինում և օգտագործում է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

17.6 ՀՀ փաստաբանական դպրոցի գույքը վաճառելու կամ ձեռք բերելու կամ այլ գործարք կատարելու դեպքում, եթե գույքի արժեքը գերազանցում է նվազագույն աշխատավարձի հազարապատիկը, ապա ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենը պետք է նախապես ստանա Խորհրդի համաձայնությունը (թույլտվությունը), եթե նման գործարք նախատեսված չէ ՀՀ փաստաբանական դպրոցի բյուջեով:

XVIII. ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

18.1 ՀՀ փաստաբանական դպրոցը չի կարող վերակազմակերպվել:

18.2 ՀՀ փաստաբանական դպրոցի լուծարումը հանգեցնում է դրա դադարմանը՝ առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

18.3 ՀՀ փաստաբանական դպրոցը լուծարելու մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ շահագրգիռ անձանց դիմումով:

18.4 ՀՀ փաստաբանական դպրոցը կարող է լուծարվել, եթե՝

- 1) ՀՀ փաստաբանական դպրոցի գույքը բավարար չէ նրա գործունեության իրականացման համար, և անհրաժեշտ գույք ստանալու հնարավորությունն իրական չէ.
- 2) իր գործունեությամբ ՀՀ փաստաբանական դպրոցը շեղվել է կանոնադրությամբ նախատեսված նպատակներից.
- 3) հնարավոր չէ հասնել ՀՀ փաստաբանական դպրոցի նպատակներին և կատարել այդ նպատակների փոփոխություններ կամ լրացումներ.

- 4) ՀՀ փաստաբանական դպրոցի գործունեությունը վտանգում է պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգը, հանրության առողջությունն ու բարքերը, այլոց իրավունքներն ու ազատությունները.
 - 5) ՀՀ փաստաբանական դպրոցը թույլ է տվել օրենքի բազմակի կամ կոպիտ խախտումներ կամ պարբերաբար իրականացրել է իր կանոնադրական նպատակներին հակասող գործունեություն.
 - 6) ՀՀ փաստաբանական դպրոցը ստեղծելիս հիմնադիրը թույլ է տվել օրենքի էական խախտումներ կամ կեղծիքներ:
- 18.5 Դատարանի կողմից ՀՀ փաստաբանական դպրոցի լուծարման մասին որոշում ընդունելուց հետո ՀՀ փաստաբանական դպրոցի խորհուրդը նշանակում է լուծարման հանձնաժողով (լուծարող) և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի և «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ սահմանում է լուծարման կարգը և ժամկետները:
 - 18.6 Լուծարման հանձնաժողովի նշանակման պահից նրան են անցնում ՀՀ փաստաբանական դպրոցի գործերի կառավարման լիազորությունները: Լուծարվող ՀՀ փաստաբանական դպրոցի անունից դատարանում հանդես է գալիս լուծարման հանձնաժողովը:
 - 18.7 Լուծարման գործընթացում գտնվելու մասին տեղեկությունները (լուծարման գործընթացի սկիզբը և ավարտը, լուծարման հանձնաժողովի կազմը) գրառվում են իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում լուծարման հանձնաժողովի դիմումի հիման վրա:
 - 18.8 Լուծարման հանձնաժողովն <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հայտարարություն է զետեղում հիմնադրամի լուծարման և պարտատերերի պահանջների ներկայացման կարգի ու ժամկետի մասին: Այդ ժամկետը չի կարող պակաս լինել երկու ամսից՝ սկսած լուծարման մասին հրապարակման պահից, որը համարվում է ՀՀ փաստաբանական դպրոցի լուծարման գործընթացի սկիզբ:
 - 18.9 Լուծարման հանձնաժողովն իրականացնում է գույքի վերագնահատումը, միջոցներ է ձեռնարկում պարտատերերի հայտնաբերման և դեբիտորական պարտքերի ստացման ուղղությամբ, ինչպես նաև տեղեկացնում է պարտատերերին ՀՀ փաստաբանական դպրոցը լուծարման մասին:
 - 18.10 Լուծարման ընթացքում ՀՀ փաստաբանական դպրոցն իրավունք ունի կնքել նոր գործարքներ և ստանձնել նոր պարտավորություններ՝ միայն իր պարտավորությունները կատարելու համար անհրաժեշտ ընթացիկ գործունեությունն ավարտելու անհրաժեշտության դեպքում:
 - 18.11 Պարտատերերի կողմից պահանջներ ներկայացնելու ժամկետն ավարտվելուց հետո լուծարման հանձնաժողովը կազմում է միջանկյալ լուծարման հաշվեկշիռ, որը տեղեկություններ է պարունակում լուծարվող հիմնադրամի գույքի կազմի, պարտատերերի ներկայացրած պահանջների ցանկի, ինչպես նաև պահանջների քննարկման

արդյունքների մասին:

- 18.12 Միջանկյալ լուծարման հաշվեկշիռը հաստատում է Խորհուրդը:
- 18.13 Միջանկյալ լուծարման հաշվեկշռի հաստատվելուց հետո, եթե լուծարվող հիմնադրամի ունեցած դրամական միջոցներն անբավարար են պարտատերերի պահանջները բավարարելու համար, լուծարման հանձնաժողովը, Օրենքով սահմանված կարգով, հրապարակային սակարկություններով իրականացնում է ՀՀ փաստաբանական դպրոցի գույքի վաճառքը:
- 18.14 Լուծարման հանձնաժողովը լուծարվող ՀՀ փաստաբանական դպրոցի պարտատերերին վճարումներ է կատարում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 70-րդ հոդվածով սահմանված հերթականությամբ և միջանկյալ լուծարման հաշվեկշռին համապատասխան՝ սկսած դրա հաստատման պահից:
- 18.15 Պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին ՀՀ փաստաբանական դպրոցը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ, գույքն ուղղվում է ՀՀ փաստաբանական դպրոցի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին (ՀՀ փաստաբանների պալատի կողմից ստեղծվող ոչ առևտրային այլ կազմակերպությանը):
- 18.16 ՀՀ փաստաբանական դպրոցի գույքի ամբողջական բաշխումն իրականացնելուց հետո լուծարման հանձնաժողովը կազմում է լուծարման հաշվեկշիռ և ներկայացնում է ներկայացնում Խորհրդի հաստատմանը: Լուծարման հանձնաժողովը ի Խորհրդի հաստատած լուծարման հաշվեկշիռը ներկայացնում է դատարանի հաստատմանը:
- 18.17 Լուծարման հանձնաժողովը հաստատված լուծարման հաշվեկշռն օրենքով սահմանված մյուս փաստաթղթերի հետ ներկայացնում է իրավաբանական անձանց պետական ռեգիստր ՀՀ փաստաբանական դպրոցի լուծարման պետական գրանցում կատարելու համար:
- 18.18 ՀՀ փաստաբանական դպրոցի լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գոյությունը դադարած՝ պետական գրանցման պահից:
- 18.19 Խորհրդի կողմից լուծարման հետ կապված սահմանված իր լիազորությունները երկամսյա ժամկետում (համապատասխանաբար դատարանի կողմից որոշման ընդունման, լուծարման հանձնաժողովի կողմից լուծարման միջանկյալ հաշվեկշռի և լուծարման հաշվեկշռի ներկայացման պահից) չկատարելու դեպքում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը ՀՀ փաստաբանական դպրոցի լուծարման հետ կապված լիազորությունների իրականացման նպատակով երկամսյա ժամկետում նշանակում է ժամանակավոր խորհուրդ:
